ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ թիվ 27-Ա

«10» մայիսի 2018 թվական գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ/ ԱՄԱՍԻԱ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ/ ԳՏՆՎՈՂ 0.108007 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ՝ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի դրույթով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010 թվականի հունիսի 1-ի թիվ 186-Ն հրամանով հաստատված «Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգի» 9-րդ կետի 5-րդ ենթակետը և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի վարչական սահմաններում /Ամասիա բնակավայրում/ գտնվող 0.108007 հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ (հասցեն՝Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ամասիա համայնք, Ամասիա բնակավայր, 2-րդ փողոց, 86/1 հողամաս) գոյություն չունեն որևէ իրավունք հաստատող փաստաթղթեր և թույլ տրված անճշտության հետևանքով այն համայնքին է փոխանցվել որպես «անհայտ» քաղաքացու սեփականություն, անճշտությունը ուղղելու նպատակով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի վարչական սահմաններում /Ամասիա բնակավայրում/ գտնվող (հասցեն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Ամասիա համայնք, Ամասիա բնակավայր 2-րդ փողոց, 86/1 հողամաս) 0.108007 հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականություն:

2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար Ջեմմա Հարությունյանին.

1) Սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանում՝ հողամասի նկատմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականության իրավունքը պետական գրանցման ենթարկելու համար:

2) Հողամասի նկատմամբ սեփականության սուբյեկտի սույն որոշման 1-ին կետով նախատեսված փոփոխությամբ պայմանավորված, հողերի ընթացիկ հաշվառման տվյալների հիման վրա համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

3. Հողամասի սահմանված կարգով կազմված հատակագծերը կցվում են սույն որոշմանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝ 8	*Դեմ՝ 0*	*Ձեռնպահ՝ 0*
ԱՐՏԵՄ ԴԱՎԹՅԱՆ՝			
ԱՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ՝			
ՍԵՐՈԲ ՂՈՒԿԱՍՅԱՆ՝			
ԿԱՐԱՊԵՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ՝			
ՀԱՅԿ ՆԻԿՈԼՅԱՆ՝			
ՎԱՐԴԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ՝			
ԱՆԴՐԱՆԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ՝			
ԱԼԵՔՍԱՆ ՔՈՉՈՅԱՆ՝			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՋԵՄՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«10» մայիսի 2018 թվական
գյուղ Ամասիա

Հողամասի Հատակագիծ

Սեփ. [illegible]
Հողամասի ... «05» 04 2018թ

Ծածկագիր [illegible] ... ՀՀ Շիրակի մարզ ... Համայնք: Ամասիա գ. Ամասիա

ծն Ամասիա 2փ 86/1.

Մասշտաբ 1 : 500

Մակերեսը (հա)	0.108007հա	Հողամասի: Կետի համար	Կոորդինատներ: X	Կոորդինատներ: Y	Կողմի երկար.	Սահմանակից հողօգտագործողներ	Շինության: Կետի համար	Գործառնական նշանակությունը	Կետի համար	Կոորդինատներ: X	Կոորդինատներ: Y	Գծային չափերը
Ծածկագիրը		1	8397120.3753	4537020.5873	14.60	[illegible]						
		2	8397108.5762	4537029.2030	59.37	[illegible]						
		3	8397163.1501	4537052.5930	20.50							
Նպատակային նշանակությունը	ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ	4	8397172.3403	4537034.1610	37.84	[illegible]						
		5	8397137.9669	4537018.8047	17.68	[illegible]						
		1	8397120.3753	4537020.5873								
Գործառնական նշանակությունը	ԲՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ											
Հողամասը ծանրաբեռնված է												

Կազմող Ա.Առաքելյան

Լիցենզավորման վկայականի համարը 007 Տրման ամիս ամսաթիվ 05.12.2011թ

Կազմակերպության անունը «ԱՐ ԷՆԴ ԷՄ» ՍՊԸ

	Ա.Առաքելյան	03.04.2018թ.			